



**ԵՂԵԳՆԱԶՈՐԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՕՐՀՈՒՍ ԿԵՆՏՐՈՆ**

«Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, Շահումյան 5 / Հեռ. 055 40 30 18; էլ. փոստ info_yeghegnadzor@aarhus.am, narekbeg@yahoo.com

Ե-02/14

10 Փետրվար

«Քննապահականության նախարար

Արամ Հարությունյանին

Եղեգնաձորի Օրհուս կենտրոնի համակարգող

Նարեկ Բեգլարյանից

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Հարությունյան,

Հիմք ընդունելով «Սահմանադրության 27.1 և 33.2 հոդվածները, «կողմից վավերացված Օրհուսի համաձայնագրի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթները, կարևորելով շրջակա միջավայրի, մարդկանց առողջության ու անվտանգության պաշտպանությունը, հասարակության իրազեկության աստիճանի բարձրացումը՝ խնդրում եմ Ձեզ Եղեգնաձորի Օրհուս կենտրոնին տրամադրել պաշտոնական մանրամասն տեղեկատվություն հետևյալի մասին.

2014 թվականին Վայոց ձոր մարզում Բնապահականության նախարարության կողմից հաստատված գործողությունների, ծրագրերի (խնդրում եմ տրամադրել ցանկը) վերաբերյալ:

Իրականացման ժամկետների ու կատարողների վերաբերյալ:

Գործողությունների, ծրագրերի բյուջեների վերաբերյալ:

Գործողությունների, ծրագրերի իրագործումից ակնկալվող արդյունքների վերաբերյալ:

Բնապահականության նախարարության կայքում վերոնշյալ տեղեկատվության հղման վերաբերյալ:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջների համաձայն, խնդրում եմ մեր հարցմանը պատասխանել ամբողջությամբ և 5-օրյա ժամկետում (բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության /30-օրյա ժամկետ/):

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքերի մասին («Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդված):

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով՝

Եղեգնաձորի Օրհուս կենտրոնի համակարգող  Նարեկ Բեգլարյան